ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/41548-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-689-26.10.2023-ՊԱ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 23 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1224 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան
Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող
Հեռ. 010515686
Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-689-26.10.2023-ՊԱ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (այսուհետ՝ նախագծերի փաթեթ) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն ստորև ներկայացնում է իր դիտարկումներն ու առաջարկությունները:

I. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ (այսուհետ՝ նախագիծ)

1. Նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 19-րդ հոդվածում լրացվող՝

1) 1.1-ին մասով առաջարկվող կարգավորումների առնչությամբ հարկ է նկատի ունենալ, որ զինապարտության ոլորտի խնդիրները սերտ կապի մեջ են գտնվում պետության կողմից իրականացվող ընդհանուր քաղաքականության տարբեր բնագավառների, այդ թվում՝ միգրացիոն քաղաքականության հետ: Այս առումով, առաջարկվող կարգավորումները պետք է պարունակեն համալիր լուծումներ, որոնք լիարժեք կերպով իրացված չեն ներկայացված նախագծերի փաթեթում: Մասնավորապես, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու» մասին օրենքի նախագծով առաջարկվող կարգավորումները կարող են խոչընդոտել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար դիմումներ ներկայացնելուն, քանի որ զինվորական ծառայություն անցնելու կամ չծառայելու համար վճարում կատարելու պահանջի առկայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումների քանակը կտրուկ կնվազի: Նշվածը, ընդհանուր առմամբ, հակասում է քաղաքացիության շնորհման ոլորտում պետության որդեգրած ընդհանուր քաղաքականությանը՝ հայրենադարձության և քաղաքացիություն ձեռք բերելու խթանմանը նպաստելու առումով:

Վերոնշյալով պայմանավորված, առաջարկում ենք ձեռնպահ մնալ նշված կարգավորումից.

2) 1.2-րդ մասում «24 ամիս ժամկետով» բառերը փոխարինել «30 ամիս ժամկետով» բառերով, «12 ամիս» բառերը փոխարինել «15 ամիս» բառերով, «6 ամիս» բառերը փոխարինել «7 ամիս 15 օր» բառերով.

3) 1.2-րդ մասի ձևակերպումների արդյունքում կստացվի մի իրավիճակ, որ օրենքի

19-րդ հոդվածի 1.2-րդ մասով նախատեսվող իրավունքից կկարողանան օգտվել միայն արական սեռի այն քաղաքացիները, որոնց 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքները լրացած է և վերջիններիս նկատմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում: Այսինքն, այս խմբից դուրս են մնում օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքները լրացած այն քաղաքացիները, որոնց նկատմամբ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար դեռևս օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում չի հարուցվել, և վերջիններս օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասով նախատեսվող իրավունքից օգտվելու համար պետք է սպասեն, մինչև իրենց նկատմամբ օրենքով սահմանված կարգով քրեական հետապնդում հարուցվի.

4) 1.2-րդ մասում հստակեցման կարիք ունի նաև «ով սահմանված կարգով զինվորական հաշվառման է վերցվել 27 տարին լրանալուց հետո» ձևակերպումը՝ իրավական որոշակիության սկզբունքի ապահովման տեսանկյունից: Մասնավորապես, առաջարկում ենք հստակեցնել, թե 27 տարին լրանալուց հետո զինվորական հաշվառման վերցվելու դեպքերը ո՞ր իրավական ակտի ո՞ր դրույթներով են սահմանված.

5) 1.2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել այլընտրանքային ծառայության (աշխատանքային կամ զինվորական) անցնելու հնարավորության ժամկետները, ինչպես նաև նախագծի հետ միասին ներկայացնել «Այլընտրանքային ծառայության մասին» օրենքում համապատասխան կարգավորումների վերաբերյալ նախագիծ.

6) 1.2-րդ մասում անհրաժեշտ է «2018 թվականի ապրիլի 9-ի» բառերը փոխարինել «2021 թվականի հունվարի 1-ին» բառերով.

7) 1.2-րդ մասում անհրաժեշտ է հստակեցնել օրենքի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած և զորակոչային տարիքը լրացած քաղաքացիները զինվորական ծառայության զորակոչվելու ցանկություն հայտնելու դեպքում պարտադիր զորակոչվում են զինվորական ծառայության, թե չեն կարող չզորակոչվել՝ ունենալով օրենքով սահմանված տարկետման հիմքեր: Խնդրի լուծման համար առաջարկվում է 1.2-րդ մասը «տաս միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ» բառերից հետո լրացնել «՝ եթե չունեն սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք» բառերով:

2. Նախագծի 2-րդ հոդվածի 1.2-րդ մասն առաջին նախադասությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Զորակոչային տարիքը լրացած և սույն օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ զորակոչից տարկետման հիմք ունեցող քաղաքացիները չեն կարող զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության և պարտավոր են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել 15 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ:»:

3. Նախագծում անհրաժեշտ է լրացումներ կատարել նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում՝ «27 տարին» բառերից հետո լրացնելով «, իսկ սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված անձինք՝ մինչև 37 տարին» բառերը:

4. Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության

առաջարկության 1-ին կետը, նախագծի 3-րդ հոդվածով օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 2.1-ին կետում «1.1-րդ և 1.2-րդ մասերով» բառերը փոխարինել «1.2-րդ մասով» բառերով, իսկ «զինվորական» բառից հետո լրացնել «այլընտրանքային» բառով:

5. Նախագծի 4-րդ հոդվածում անհրաժեշտ է հստակ սահմանել այն անձանց շրջանակը, որոնց վրա տարածվելու են օրենքի դրույթները՝ այն նկատառմամբ, որպեսզի առաջարկվող կարգավորումները լրացուցիչ խթան չհանդիսանան պարտադիր զինվորական ծառայությունից Հայաստանի Հանրապետության քաղաքացիների խուսափման համար: Այդ նպատակով առաջարկում ենք 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2-րդ մասով.

«2. Սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասի գործողությունը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 25 տարին լրացած և օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների վրա:»:

6. Առաջարկում ենք քննարկել նաև նախագծով առաջարկվող կարգավորումներին հետադարձ ուժ տալու վերաբերյալ անցումային դրույթներ նախատեսելու նպատակահարմարության հարցը:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախագծերի փաթեթի ընդունման դեպքում անհրաժեշտություն է առաջանալու համապատասխան փոփոխություններ կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշմամբ հաստատված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման և 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1269-Ն որոշմամբ սահմանված զինվորական հաշվառման կարգերում:

II. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ նախագիծ) օրենսգրքի 461-րդ հոդվածի 4-րդ մասում առաջարկվող լրացման կապակցությամբ գտնում ենք, որ առաջարկվող նորմի մեկնաբանությունից բավարար չափով պարզ չէ, թե Հայաստանի Հանրապետության պետական բյուջե օրենքով սահմանված գումարը վճարելուց բացի արդյոք նշված հոդվածով սահմանված հանցավոր արարք կատարած անձին քրեական պատասխանատվությունից ազատելու անհրաժեշտ և պարտադիր պայման է նաև նրա կողմից կամովին ներկայանալը, թե՞ քրեական պատասխանատվությունից ազատվելու համար միայն բավարար է օրենքով սահմանված գումարը վճարելը (վարույթի մասնավոր մասնակցի կողմից օրենսդրական նորմն իր օգտին մեկնաբանելու հնարավորություն):

Արդյունքում կարող է ստացվել այնպիսի իրավիճակ, երբ քրեական հետապնդվող անձը, առանց վերադառնալու Հայաստանի Հանրապետություն, հնարավորություն կունենա օրենքով սահմանված գումարը վճարելով ազատվել քրեական պատասխանատվությունից և ինչը կնշանակի, որ նախագիծը չի ծառայի նախագծի հիմնավորումներում նշված նպատակներին՝ բազմաթիվ քաղաքացիների վերադարձին հայրենիք, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համալրմանը, լրացուցիչ ֆինանսական միջոցների մուտքերին Հայաստանի Հանրապետության բյուջե և այլն:

Այսպիսով, գտնում ենք, որ օրենսգրքի 461-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նախագծով առաջարկվող խմբագրությունն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել նրան,

որ վարույթի հանրային և մասնավոր մասնակիցները միատեսակ ընկալում չձևավորեն նշված նորմի կիրառության վերաբերյալ և արդյունքում նշված օրենսդրական նորմը լիարժեք չծառայի իր իրավակարգավորիչ նպատակին: Այդ առումով, առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածը «կամ» բառից հետո լրացնել «ներկայանալով քրեական վարույթ իրականացնող մարմին՝» բառերով:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծերի փաթեթը լրամշակման կարիք ունի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 1224 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՔԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Արման Սարգսյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը (Պ-689-26.10.2023-ՊԱ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.11.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

Պ-689-26.10.2023-ՊԱ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» 2017 թվականի նոյեմբերի 15-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետից հետո լրացնել 1.1-ին եւ 1.2-րդ կետեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-ին մասում նշված քաղաքացիների համար՝ 12 ամիս.

1.2) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.2-րդ մասում նշված քաղաքացիների համար՝ այդ մասով սահմանված ժամկետներով.»:

ՀՈԴՎԱԾ 2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել 1.1-ին եւ 1.2-րդ մասեր՝ հետեւյալ բովանդակությամբ.

«1.1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա են նաեւ 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած եւ մինչեւ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալը 12 ամսից պակաս ժամկետով որեւէ պետության զինված ուժերի կազմում զինվորական ծառայություն անցած կամ այդպիսի ծառայություն չանցած մինչեւ 37 տարեկան արական սեռի քաղաքացիները: Սույն մասում նշված քաղաքացին սույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 5-րդ մասերով, 23-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով եւ 24-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում կարող է 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնելու փոխարեն Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ եւ ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից:

1.2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված տարիքները լրացած եւ սույն օրենքի կամ 2018 թվականի ապրիլի 9-ին ուժը կորցրած «Զինապարտության մասին» օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած արական սեռի քաղաքացիները կարող են մինչեւ 37 տարին լրանալն իրենց ցանկությամբ զորակոչվել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության՝ 24 ամիս ժամկետով, կամ 12 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով երկու միլիոն հինգ հարյուր հազար Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 6 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով հինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ 1 ամիս ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասը միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ, կամ պարտադիր զինվորական ծառայության չզորակոչվել, փոխարենը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելով տասնհինգ միլիոն Հայաստանի Հանրապետության դրամ: Սույն մասի իմաստով օրենքի պահանջների խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած է համարվում Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ում նկատմամբ պարտադիր զինվորական կամ այլընտանքային ծառայության հայտարարված զորակոչից խուսափելու համար օրենքով սահմանված կարգով հարուցված է քրեական հետապնդում կամ ով սահմանված կարգով զինվորական հաշվառման է վերցվել 27 տարին լրանալուց հետո:»:

ՀՈԴՎԱԾ 3. Օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասում.

1) 2-րդ կետից հետո լրացնել 2.1-ին կետ՝ հետեւյալ բովանդակությամբ.

«2.1) սույն օրենքի 19-րդ հոդվածի 1.1-րդ եւ 1.2-րդ մասերով սահմանված կարգով եւ ժամկետներով շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայություն անցած եւ համապատասխան ծառայությունից սույն օրենքով սահմանված կարգով արձակված կամ սահմանված համապատասխան գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած քաղաքացիները.».

2) 7-րդ կետում «27» թիվը փոխարինել «37» թվով:

ՀՈԴՎԱԾ 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ԱՌԿԱ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համաձայն գործող օրենսդրության (մասնավորապես՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք))՝ 18-ից 27 տարեկան արական սեռի ՀՀ քաղաքացիները ենթակա են պարտադիր զինվորական ծառայության ՀՀ զինված ուժերում: Պարտադիր զինվորական ծառայությունից խուսափելու համար քրեական օրենսդրությամբ սահմանված է պատիժ՝ ազատազրկման ձեւով: Եթե քաղաքացին խուսափում է ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչից, նրա նկատմամբ հարուցվում է քրեական հետապնդում եւ իրականացվում են օրենքով սահմանված համապատասխան գործընթացներ: Եթե միչեւ 27 տարին լրանալը քաղաքացին կամավոր ներկայանում եւ անցնում է պարտադիր զինվորական ծառայություն, ապա քրեական հետապնդումը դադարում է:

Օրենքով սահմանված 27 տարին լրանալուց հետո պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացին չի կարող զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության, քանի որ նրա տարիքը գերազանցում է պարտադիր զինվորական ծառայության սահմանային տարիքը:

Այսպիսով, 27 տարին լրանալուց հետո ներկայանալու դեպքում քաղաքացու համար գործում է մեկ տարբերակ՝ պատժվել ազատազրկմամբ:

Առկա կարգավորումների պայմաններում հանրապետությունում փաստացի ստեղծվել է անցանկալի եւ անելանելի իրավիճակ՝ կապված այն հանգամանքների հետ, որ մի կողմից սահմանափակվել է ՀՀ զինված ուժերի եւ պահեստազորի շարքերը առավել մեծ թվով քաղաքացիներով համալրելու հնարավորությունը, իսկ մյուս կողմից՝ մեր հայրենակիցների ոչ ստվար զանգված գտնվելով քրեական հետապնդման ու հետախուզման մեջ, ստիպված բացակայում են իրենց հայրենիքից եւ ընտանեկան միջավայրից, մինչդեռ նրանք նույնպես մեծագույն ցանկություն ունեն վերադառնալու եւ ծառայելու ՀՀ զինված ուժերում, ինչի հնարավորությունը ներկայումս չունեն: Իսկ եթե նկատի ունենալու լինենք նաեւ իրավապահ մարմինների կողմից վերը նշված անձանց նկատմամբ համապատասխան դատավարական եւ քրեակատարողական ընթացակարգերի իրականացումը, ապա հաստատապես կարելի է արձանագրել այդ կապակցությամբ հսկայական պետական միջոցներ ու ժամանակ ծախսվելու, ինչպես նաեւ լրացուցիչ աշխատանքային ծանրաբեռնվածություն ստեղծվելու հանգամանքների մասին: Միանգամայն հասկանալի է, որ

առկա նման իրավիճակը ՀՀ-ի համար անընդունելի է, ինչպես ռազմավարական, այնպես էլ՝ բարոյահոգեբանական եւ ֆինանսատնտեսական առումներով:

Առաջարկվող Նախագծով նախատեսվում է 27 տարին լրացած եւ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին հնարավորություն տալ անցնելու զինվորական ծառայություն՝ միաժամանակ ՀՀ պետական բյուջե վճարելով համապատասխան գումարներ, կամ՝ առանց զինվորական ծառայություն անցնելու, պետական բյուջե վճարելով համապատասխան գումար՝ նշված բոլոր դեպքերում ազատվելով քրական պատասխանատվությունից: Մասնավորապես.

Նախագծով 27-ից 37 տարեկան քաղաքացուն հնարավորություն է տրվում՝

1) զինվորական ծառայություն անցնել 24 ամիս ժամկետով,

2) զինվորական ծառայություն անցնել 12 ամիս ժամկետով եւ ՀՀ պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ,

3) զինվորական ծառայություն անցնել 6 ամիս ժամկետով եւ ՀՀ պետական բյուջե վճարել հինգ միլիոն ՀՀ դրամ,

4) զինվորական ծառայություն անցնել 1 ամիս ժամկետով եւ ՀՀ պետական բյուջե վճարել տասը միլիոն ՀՀ դրամ,

5) զինվորական ծառայության փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարել տասնհինգ միլիոն ՀՀ դրամ:

Բացի այդ, գործող իրավակարգավորումների համաձայն՝ ՀՀ-ում ծնված կամ մինչեւ 27 տարին լրանալը ՀՀ քաղաքացիություն ստացող անձինք ենթակա են 2 տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայության, իսկ 27 տարին լրանալուց հետո ՀՀ քաղաքացիություն ստացող անձինք այդպիսի պարտականություն չունեն, ինչն էական անհավասարություն է առաջացնում հիշյալ երկու խումբի ՀՀ քաղաքացիների միջեւ՝ վերջիններիս համապատասխան պարտականությունները հավասարակշռելու առումով:

Նախագծի փաթեթի ընդունման դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա կլինեն նաեւ 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած արական սեռի քաղաքացիները: Ընդ որում, նրանք կարող են 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնել ՀՀ զինված ուժերում, կամ՝ ՀՀ պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ եւ ազատվել զինվորական ծառայությունից:

ԿԱՐԱԳԱՎՈՐՄԱՄԲ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Նախագծով առաջարկվող կարգավորումների կիրառմամբ ակնկալվում են հետեւյալ հիմնական արդունքները.՝

1) բազմաթիվ քաղաքացիներ կվերադառնան հայրենիք,

2) ՀՀ զինված ուժերը կհամալրվեն հայրենադարձ քաղաքացիներով, նրանք սահմանված կարգով ծառայության կանցնեն ՀՀ զինված ուժերում, կտան զինվորական երդում, իսկ ծառայությունից արձակվելուց հետո կհաշվառվեն պահեստազորում,

3) լրացուցիչ ֆինանսական միջոցներ կմուտքագրվեն ՀՀ պետական բյուջե,

4) կխնայվեն 27 տարին լրացած, զինվորական ծառայությունից խուսափած քաղաքացիներին հայտնաբերելու, քրեական պատասխանատվության ենթարկելու, դատապարտելու, անազատության մեջ նրանց պահելու համար ծախսվող ֆինանսական եւ նյութական միջոցները,

5) որոշակի չափով կթոթափվի ոստիկանության, քննչական կոմիտեի, դատախազության, դատարանների, պրոբացիայի ծառայության եւ իրավասու մյուս մարմինների համապատասխան գործառութային ծանրաբեռնվածությունը,

6) բազմաթիվ երիտասարդներ՝ շատերն ընտանիքներով, կվերադառնան հայրենիք մշտական բնակության՝ իրենց հետ բերելով օտարերկրյա պետություններում կուտակած ֆինանսական միջոցները, որոնց հաշվին կկատարվեն ներդրումներ, կներգրավվեն աշխատանքում , ինչպես նաեւ կստեղծվեն նոր աշխատատեղեր,

7) այն երիտասարդները, ովքեր չեն տեղափոխվի ՀՀ մշտական բնակության, առնվազն՝ որպես զբոսաշրջիկ, հաճախակի անխոչընդոտ կայցելեն հայրենիք,

8) կամրապնդվեն ու կխորանան Սփյուռքի եւ Հայաստանի միջեւ առկա բազմաբնույթ կապերը եւ այլն:

Եթե 27 տարին լրացած քաղաքացիներին չընձեռնվի Նախագծով առաջարկվող հնարավորությունը, ապա գործող կարգավորումներով նա չի վերադառնա հայրենիք մինչեւ 37 տարեկանը լրանալը, քանի որ 37 տարեկանում քաղաքացին ազատվում է քրեական հետապնդումից՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Սակայն, հասկանալի պատճառներով, այս դեպքում նրանցից քչերի մոտ պահպանված կլինի հայրենիք վերադառնալու ցանկությունը, իսկ վերադարձողները եւ՛ չեն ծառայի ՀՀ զինված ուժերում, եւ՛ ՀՀ պետական բյուջե գումար չեն վճարի:

Նախագծով Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասից հետո առաջարկվող մյուս՝ 1.2-րդ լրացումով կարգավորումը հնարավորություն է տալիս շտկելու մի կողմից՝ ՀՀ-ում ծնված կամ մինչեւ 27 տարին լրանալը ՀՀ քաղաքացիություն ստացող անձանց եւ մյուս կողմից՝ 27 տարեկանից հետո ՀՀ քաղաքացիություն ստացող անձանց միջեւ առկա անհավասարությունը՝ կապված այն հանգամանքի հետ, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ ՀՀ-ում ծնված կամ մինչեւ 27 տարին լրանալը ՀՀ քաղաքացիություն ստացող անձինք պարտավոր են անցնելու 2 տարի ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն, իսկ 27 տարին լրանալուց հետո ՀՀ քաղաքացիություն ստացող անձինք այդպիսի պարտավորություն չունեն: Մինչդեռ, ինչպես արդեն նշվեց վերեւում, Նախագծի ընդունման դեպքում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա կլինեն նաեւ 27 տարին լրանալուց հետո օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած արական սեռի քաղաքացիները: Ընդ որում, նրանք կարող են 12 ամիս ժամկետով պարտադիր զինվորական ծառայություն անցնել ՀՀ զինված ուժերում, կամ ՀՀ պետական բյուջե վճարել երկու միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ եւ ազատվել զինվորական ծառայությունից:

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվում է ներդնել Նախագծով առաջարկվող՝ ՀՀ զինված ուժերի շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության վերոնշյալ նոր համակարգը, ըստ այդմ՝ համապատասխան փոփոխություն եւ լրացումներ կատարելով համապատասխանաբար՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում եւ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում, որից բխող համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կկատարվեն նաեւ խնդրո առարկային վերաբերող ենթաօրենսդրական կարգավորումներում, ինչով հնարավոր կլինի հասնելու վերը հիշատակված ակնկալվող արդյունքներին: